ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ք.Աշտարակ 2024թ. օգոստոսի 8 -ին, N 309 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ԼՈՒՍԱԿՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՏԱԹԵՎԻԿ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԵՐԿԱՐԱՑՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 160-ր հոդվածներով, 164-րդ հոդվածի 1-ին մասով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված 3-րդ հավելվածի 61-րդ կետը և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Լուսակնի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Տաթևիկ Մնացականյանի 2024 թվականի օգոստոսի 7-ի դիմումը. ***որոշում եմ՝***

1.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Լուսակնի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Տաթևիկ Մնացականյանին տրամադրել ամենամյա երկարացված արձակուրդ 2023-2024 թվականների ուսումնական տարվա համար 8 աշխատանքային օր տևողությամբ՝ 2024 թվականի օգոստոսի 14-ից օգոստոսի 23-ը ներառյալ:

Տաթևիկ Մնացականյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Լուսակնի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար նշանակել «Լուսակնի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ուսուցչուհի Աննա Հովհաննիսյանին:

3. Տաթևիկ Մնացականյանին աշխատանքի մեջ համարել 2024 թվականի օգոստոսի 26-ից:

Պարտականությունները կատարող՝

Восстановимая подпись

X

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԳՈՒԼՅԱՆ

Подписано: GULYAN HARUTYUN 3102850391

Հ. ԳՈՒԼՅԱՆ